

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի անցկացման սեմինարավար անհատ խորհրդատուի մրցույթ

11 հունվարի 2019թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի անցկացման սեմինարավար անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

30 շաբաթուրդի համար կազմակերպվող և անցկացվող 64 ժամ տևողությամբ /ներառյալ ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների կիրառման ստուգումը – Follow up-ը՝ 24 ժամ/ դասընթացի վարման համար անհրաժեշտ է՝

- ✓ ուսումնասիրել համանման դասընթացների դասավանդման տեղական և միջազգային փորձը,
- ✓ ծրագրի ղեկավարի և համակարգողի հետ քննարկել և հաստատել դասընթացի մասնակիցների վերջնական ցուցակը, ապահովել իրազեկությունը սեմինարի անցկացման վայրի, ժամի մասին,
- ✓ իրականացնել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի վարում,
- ✓ դասընթացի ավարտին համակարգել ստացված գիտելիքները գործնականում կիրառելու գործընթացը («Follow up»-ը),
- ✓ իրականացնել ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ, գնահատումներ:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	<ul style="list-style-type: none"> ✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ: ✓ Ռուսերենի և անգլերենի բավարար իմացությունը ցանկալի է: 	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	<ul style="list-style-type: none"> ✓ տեսական, գործնական, սեմինար պարապմունքներ վարելու աշխատանքային փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ, ✓ տուրիզմի և սերվիսի ոլորտի պրակտիկ աշխատանքային փորձը ցանկալի է, ✓ հեռուստուցման համակարգին վերաբերող գիտելիքների տիրապետումը ցանկալի է: 	40
3.	Հատուկ աշխատանքային	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցություն կայուն տուրիզմի զարգացման, սերվիսի ոլորտի 	40

	փորձ	վերապատրաստման որևէ դասընթացի, ինչպես նաև դրա ընթացիկ և ամփոփիչ ստուգումներին:	
	Ընդամենը՝		100

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 1 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), gspi1934@mail.ru, հեռախոս՝ 093-853-706:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2019 թվականի հունվարի 18-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում անցկացվող

անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____ /

(ստորագրություն)

« ____ » _____ 2019 թ.